ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**N 68**

**« 27» « 06 » 2017թ.**

☎ (0-255) 6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.
Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ավագանու թիվ 17 – Ա որոշումը:

Առդիր 2 թերթ :

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
գ.Սարամեջ (27.06.2017թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հունիսի 2017 թվական, 17- Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔ(ՆԵՐ)ԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարամեջ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացություն(ներ)ը՝

Սարամեջ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակչ(բնակիչներ)ի դիմում(ներ)ը և համայնքի բյուջեից նրա(նց) ընտանիք(ներ)ին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումար(ներ)ը տրամադրել բնակչ(բնակիչներ)ին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ՝ (5 ) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1.ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

2.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

3.ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

4.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

5.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (21. 06.2017թ.) Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի ավագանու
2017 թվականի հունիսի 21-ի N 17-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ալիսա Ներսիսյան Սամվելի – 40000 հազար դրամ (սոց. օգնություն)
2. Լիլիթ Ցարմալյան Աղվանի - 40000 հազար դրամ (սոց. օգնություն)
3. Էդիտա Գյուլազյան Բաղալի – 40000 հազար դրամ (սոց. օգնություն)
4. Լիաննա Մինասյան Արամայիսի – 40000 հազար դրամ (սոց. օգնություն)
5. Մարիամ Սահակյան Միերի - 40000 հազար դրամ (սոց. օգնություն)
6. Քրիստինե Կարապետյան Հայկի – 40000 հազար դրամ (սոց. օգնություն)

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ